

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

« 05 » հունիսի 2019թ.

N Գ-21/25

1. Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի նկարագրությունը, վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի աշխատակից Ս. Սարգսյանի կողմից 22.04.2019 թվականին հայտնաբերվել է Հայաստանի Հանրապետության Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 154-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտում, մասնավորապես՝ քաղաքացի Արման Աշոտի Սահակյանի կողմից սեփականության իրավունքով իրեն պատկանող Բաշինջաղյան փողոցի 1-ին նրբանցքի հ. 1/3 հասցեում ինքնակամ իրականացվել է ցուցափեղկերի չափերի փոփոխմամբ ցուցափեղկերի փոխման շինարարական աշխատանքներ, որի վերաբերյալ 10.05.2019 թվականին կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ 029460 արձանագրությունը (այսուհետ՝ արձանագրություն):

Որպես իրավախախտման փաստը հաստատող ապացույց, իրավախախտման հայտնաբերման պահին լուսանկարվել է իրավախախտման վայրը:

Հայտնաբերված իրավախախտման փաստով Երևանի քաղաքապետարանի նախաձեռնությամբ հարուցվել է վարչական վարույթ:

Քաղաքացի Արման Աշոտի Սահակյանը պատշաճ ծանուցված լինելով 05.06.2019 թվականին կայանալիք գործի քննության տեղի և ժամանակի մասին չներկայացավ, ուստի Օրենսգրքի 267-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն գործը քննվեց վերջինիս բացակայությամբ:

Գործի քննության ընթացքում ուսումնասիրվեցին արձանագրությունը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության պետի 24.05.2019 թվականի հ.19/43286 գրությունը և իրավախախտման լուսանկարը:

Գործի փաստական հանգամանքների և դրանում առկա բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման արդյունքում հիմնավորվեց, որ քաղաքացի Արման Աշոտի Սահակյանի կողմից սեփականության իրավունքով իրեն պատկանող Բաշինջաղյան փողոցի 1-ին նրբանցքի հ. 1/3 հասցեում ինքնակամ իրականացվել է ցուցափեղկերի փոխման չափերի փոփոխմամբ, շինարարական աշխատանքներ, որով թույլ է տվել Օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտում:

2. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Օրենսգրքի 9-րդ հոդվածի համաձայն՝ Վարչական իրավախախտում (զանցանք) է համարվում պետական կամ հասարակական կարգի, սոցիալիստական սեփականության, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ ոտնձգվող հակաիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն:

Սույն օրենսգրքով նախատեսված իրավախախտումների համար վարչական պատասխանատվություն առաջանում է, եթե այդ խախտումները իրենց բնույթով քրեական պատասխանատվություն չեն առաջացնում գործող օրենսդրությանը համապատասխան:

Օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սեփականության կամ հողօգտագործման իրավունք ունեցող անձանց կողմից այդ հողամասի վրա շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելը, ինչպես նաև բազմաբնակարան շենքերում կամ շենքերին կից ինքնակամ կառույցներ կատարելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկու հարյուրապատիկի չափով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Օրենսգրքի 23-րդ հոդվածի 2-րդ կետով, 154-րդ հոդվածի 1-ին մասով, 219.1-րդ, 281-րդ և 282-րդ հոդվածներով, Երևանի քաղաքապետի 23.08.2013 թվականի թիվ 4180-Ա որոշմամբ (փոփոխ. 01.08.2017 թվականի թիվ 2645-Ա)՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Քաղաքացի Արման Աշոտի Սահակյանին Օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով ենթարկել վարչական պատասխանատվության՝ նշանակելով վարչական տույժ 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

2. Օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն տուգանքը պետք է վճարվի սույն որոշումը իրավախախտում կատարած անձի կողմից ստանալուց ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում՝ կենտրոնական զանձապետարանի N 900055313366 հաշվին:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վերադասության (վարչական) և դատական կարգով՝ որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՎԱՐՉԱԿԱՆ
ԻՐԱՎԱՆԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԳՈՐԾԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՂԵՏ՝



ԱՆԴՐԱՆԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ